

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N <<ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/4>>**

**ք.Երևան**

« 02 » 09 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բիդեք> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևանի ՋԵԿ-ի հարևանությամբ գտնվող հողամասի վրա թափառող կենդանիների վնասազերծման կենտրոնի կառուցման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **100 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 130 473 000 (հարյուր երեսուն միլիոն չորս հարյուր յոթանասուններեք հազար) ՀՀ դրամ, որից 21 745 500 (քսանմեկ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուին պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պատվիրատու**

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900012410289  
ՀՎՀՀ 02593108

**Կապալառու**

«Բիդեք» ՍՊԸ  
ք. Երևան, Նեկրասովի 86  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 15700 15 55 99 20 100  
ՀՎՀՀ 00450801

Է. Կիրակոսյան



Գ. Ավետիսյան



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
**Երևանի ՋԷԿ-ի հարևանությամբ գտնվող հողամասի վրա թափառող կենդանիների  
 վնասագերծման կենտրոնի կառուցման աշխատանքներ**

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	<b>Շիանարարական աշխատանքներ</b>				
	<b>Հողային աշխատանքներ</b>				
1	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք /փրում տեղում/	մ <sup>3</sup>	304.0000	0.5570	169.3280
2	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք /փրում տեղում/	մ <sup>3</sup>	60.2880	3.7950	228.7930
3	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից	մ <sup>3</sup>	8.6000	50.0460	430.3956
4	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.5760	399.1030	229.8833
5	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.3200	406.1330	129.9626
6	Խամբարաբետոնե հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից	մ <sup>3</sup>	74.0000	34.7010	2567.8740
7	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից	մ <sup>3</sup>	8.4000	57.1200	479.8080
8	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.9700	399.1030	387.1299
9	Ներդիր էլեմենտներ /բետոնի մեջ/	տն	0.2920	607.3970	177.3599
10	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-20 դասի բետոնից 40x40x4մմ անկյունակներով	մ <sup>3</sup>	26.4000	42.3670	1118.4888
11	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.1850	399.1030	73.8341
12	40x40x4մմ անկյունակի արժեքը	զմ	171.6000	1.1830	203.0028
	<b>Տանիքային մետաղական կոնստրուկցիաներ</b>				0.0000
13	160x6մմ մետաղական խողովակներից կանգնակների տեղադրում	տն	5.4100	59.5980	322.4252
14	160x6մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	184.5000	14.1720	2614.7340
15	Ծպեղների, հենակների տեղադրում 60x60x5մմ, 80x80x5մմ պողպատե խողովակներից ներդիր մակադրակներով	տն	3.1900	78.9730	251.9239
16	60x60x5մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	92.4000	4.0750	376.5300
17	80x80x5մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	192.0000	5.4720	1050.6240
18	Մակադրակներ մետաղական թերթապողպատից	տն	0.1670	525.9090	87.8268
19	Մակադրակներ 40x40x5մմ անկյունակներից	զմ	7.7000	1.4740	11.3498
20	60x60x4մմ խողովակներից կավառամածի պատրաստում	տն	3.2900	78.9730	259.8212
21	60x60x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	580.0000	3.2550	1887.9000
22	Մետաղական մակերևութների 2 շերտ յուղաներկում	տն	11.8900	35.6630	424.0331
	<b>Ադմինիստրատիվ կառույցներ N1, N2</b>				0.0000

23	Միաձույլ է/բ հաստակի պատրաստում B-20 դասի բետոնից	մ <sup>3</sup>	9.3000	42.3670	394.0131
24	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.8180	399.1030	326.4663
	<b>Տանիքի մետաղական կոնստրուկցիաներ</b>				0.0000
25	Տանիքի մեղատական խողովակներից ֆերմաների մոնտաժում ֆերմա 1-ֆերմա 4 /ներդիր էլեմենտներով/	տն	7.1340	60.0400	428.3254
26	Ֆերմաների արժեքը 100x4մմ, 108x5,5մմ, 80x4մմ, 60x4մմ մետաղական խողովակներից	տն	6.6100	781.6550	5166.7396
27	Ներդիր էլեմենտների արժեքը	տն	0.5240	512.5610	268.5820
28	Մետաղական հենակների տեղադրում 80x4մմ խողովակից, N14շվեկերից	տն	3.7800	59.5980	225.2804
29	80x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	258.0000	4.3790	1129.7820
30	N14 շվեկերի արժեքը	զմ	104.0000	6.2880	653.9520
31	60x60x4մմ խողովակներից կավառամածի պատրաստում ներդիր դետալներով	տն	3.4360	78.9730	271.3512
32	60x60x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	612.0000	3.2550	1992.0600
33	Ներդիր դետալների արժեքը թերթապողպատից	տն	0.4200	525.9090	220.8818
34	Ձեղնահարկի լուսամուտի կարկասի պատրաստում 80x40x4մմ, 40x4մմ խողովակներից	տն	0.1160	71.3050	8.2714
35	80x40x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	5.2000	3.2570	16.9364
36	40x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	18.8000	2.1660	40.7208
37	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	14.4660	35.6630	515.9010
	<b>Ադմինիստրատիվ կառույցներ N3, N4 կարանտինային կացարան</b>				0.0000
38	Միաձույլ է/բ հակասեյսմիկ գոտու պատրաստում B-20 դասի բետոնից	մ <sup>3</sup>	15.6000	62.1580	969.6648
39	Ամրանի արժեքը A500c դասի	տն	1.0510	399.1030	419.4573
40	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.7300	406.1330	296.4771
41	Առկա ամրանային կարկասով սյուների բետոնացում B-20 դասի բետոնով U-1, U-2	մ <sup>3</sup>	13.7200	94.9220	1302.3298
42	Միաձույլ է/բ հաստակի պատրաստում B-20 դասի բետոնից 40x40x4մմ անկյունակներով	մ <sup>3</sup>	28.4000	42.3670	1203.2228
43	Ամրանի արժեքը A500c դասի	տն	1.2200	399.1030	486.9057
44	40x40x4մմ անկյունակի արժեքը	զմ	62.4000	1.1830	73.8192
	<b>Կարանտինային կացարանի տանիքային մետաղական կոնստրուկցիաներ</b>				0.0000
45	Տանիքի մետաղական 100x5մմ խողովակներից ծպեղնային հեծանների տեղադրում ներդիր էլեմենտներով	տն	1.0430	78.9730	82.3688
46	100x5մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	66.5000	6.9580	462.7070
47	Ներդիր էլեմենտների մետաղական թերթապողպատից	տն	0.0320	525.9090	16.8291
48	Մակադրակներ 60x40x5մմ խողովակներից	զմ	2.0000	3.4470	6.8940
49	60x40x4մմ խողովակներից կավառամածի պատրաստում	տն	1.7000	78.9730	134.2541
50	60x40x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	300.0000	2.6370	791.1000
51	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.7430	35.6630	97.8236
	<b>Տանիքի մետաղական կոնստրուկցիաներ</b>				0.0000
52	Տանիքի մեղատական խողովակներից ֆերմաների մոնտաժում F-1-F4 /ներդիր էլեմենտներով/	տն	6.5850	60.0400	395.3634
53	Ֆերմաների արժեքը 100x4մմ, 108x5,5մմ, 80x4մմ, 60x4մմ մետաղական խողովակներից	տն	6.1140	781.6550	4779.0387
54	Ներդիր էլեմենտների արժեքը	տն	0.4740	512.5610	242.9539
55	Մետաղական հենակների տեղադրում 80x4մմ խողովակից, N14շվեկերից	տն	3.7800	59.5980	225.2804

56	80x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	261.0000	4.3790	1142.9190
57	N14 շվեյերի արժեքը	գմ	94.0000	6.2880	591.0720
58	60x60x4մմ խողովակներից կավառամածի պատրաստում ներդիր դետալներով	տն	2.6400	78.9730	208.4887
59	60x60x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	484.0000	3.2550	1575.4200
60	Ներդիր դետալների արժեքը թերթապողպատից	տն	0.4200	525.9090	220.8818
61	Ձեղնահարկի լուսամուտի կարկասի պատրաստում 80x40x4մմ, 40x4մմ խողովակներից	տն	0.1010	71.3050	7.2018
62	80x40x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	3.2000	3.2570	10.4224
63	40x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	18.8000	2.1660	40.7208
64	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	13.1060	35.6630	467.3993
	<b>Ճարտարապետաշինարարական մաս</b>				0.0000
	<b>Պատեր միջնապատեր</b>				0.0000
65	40 սմ հաստությամբ /2տակ/ բետոնե բլոկներից պատերի /191,6մ2/	մ <sup>3</sup>	76.6400	20.1910	1547.4382
66	20 սմ հաստությամբ բետոնե բլոկներից պատերի շարվածք, /691,2մ2/	մ <sup>3</sup>	138.2400	20.1910	2791.2038
67	10սմ հաստությամբ բետոնե բլոկներից միջնորմների շարվածք	մ <sup>2</sup>	683.0000	3.0710	2097.4930
	<b>Արտաքին բացվածքներ /դռներ, պատուհաններ/</b>				0.0000
68	Արտաքին մպլաստե դռների տեղադրում	մ <sup>2</sup>	25.4000	36.0260	915.0604
69	Մ/պլաստե պատուհանների տեղադրում բացվող հատված	մ <sup>2</sup>	66.6200	27.9780	1863.8944
70	Մ/պլաստե պատուհանների տեղադրում չբացվող հատված	մ <sup>2</sup>	58.8200	18.3900	1081.6998
71	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե կյութից	մ <sup>2</sup>	9.0000	1.3890	12.5010
72	Պատուհանագոգի արժեքը B=30գմ	գմ	30.0000	3.3100	99.3000
	<b>Տանիքածածկույթ</b>				0.0000
73	Ցինկապատ ներկված մետաղակղմիկներով ծածկույթի պատրաստում КП-18- 0,5մ հաստ.	մ <sup>2</sup>	1238.0000	5.5090	6820.1420
74	150x80x50մմ պողպատե խողովակներից թեքանների տեղադրում /42գմ/	տն	0.7111	71.3050	50.7021
75	150x80x50մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	42.0000	7.9450	333.6900
76	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.7111	35.6630	25.3585
77	Քիվապատի երեսպատում պլաստիկ պրոֆիլներով	մ <sup>2</sup>	401.0000	4.0210	1612.4210
78	Տանիքի ջերմամեկուսացում հանքաքարով	մ <sup>2</sup>	334.0000	1.1290	377.0860
	<b>Ճարտ. շինարարական մաս հարդարում, հատակներ, ներքին դռներ</b>				0.0000
79	Ներքին մ/պլաստե դռների տեղադրում	մ <sup>2</sup>	102.4000	36.0260	3689.0624
80	Մետաղական շրջանակով ցանցավոր փոշեներկված դռների տեղադրում /կացարանների/ /1,2x1,8/մ /66հատ/	մ <sup>2</sup>	143.0000	18.7880	2686.6840
	<b>Հարդարման և հատակային աշխատանքներ</b>				0.0000
81	Պատերի գաջե սվաղ	մ <sup>2</sup>	422.6000	1.8570	784.7682
82	Ներքին պատերի ց/ալվազե սվաղ	մ <sup>2</sup>	1761.9000	1.2030	2119.5657
83	Պատերի լատեքսային մերկում համատարած մածկապատումով	մ <sup>2</sup>	1899.4000	0.4860	923.1084
84	Պատերի երեսպատում հախճասալով	մ <sup>2</sup>	409.4000	5.0290	2058.8726
85	Առաստաղի պատրաստում 12,5մմ հաստությամբ գիպտկարտոնից ցինկապատ պրոֆիլներով	մ <sup>2</sup>	69.1000	3.0280	209.2348
86	Առաստաղի լատեքսային մերկում համատարած մածկապատումով	մ <sup>2</sup>	69.1000	0.5090	35.1719

87	Առաստաղի պատրաստում պլաստիկ նյութից ցինկապատ պրոֆիլներով	մ <sup>2</sup>	318.8000	2.9450	938.8660
	<b>Հատակներ</b>				0.0000
88	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	884.3000	1.1450	1012.5235
89	Հարթակների և թեքահարթակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /4տեղ/	մ <sup>2</sup>	81.3000	11.3860	925.6818
90	Աստիճանների և աստիճանատակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /21,6զմ/	մ <sup>2</sup>	9.7200	14.2960	138.9571
91	Կերամոգրանիտե հատակների պատրաստում	մ <sup>2</sup>	664.8000	5.7920	3850.5216
92	Կերամոգրանիտե շրիշակների տեղադրում /139,7/զմ	մ <sup>2</sup>	14.0000	6.8810	96.3340
93	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով	մ <sup>2</sup>	91.3000	5.3430	487.8159
	<b>Արտաքին աշխատանքներ</b>				0.0000
94	Արտաքին պատերի ց/ավազե սվաղ	մ <sup>2</sup>	878.0000	1.3550	1189.6900
95	Արտաքին պատերի ճակատային ներկում, մաձկապատումով	մ <sup>2</sup>	878.0000	0.8360	734.0080
96	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	մ <sup>2</sup>	76.0000	17.6450	1341.0200
	<b>Բարեկարգման աշխատանքներ պարիսպ</b>				0.0000
97	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	6.5000	2.1520	13.9880
98	Բնահողի ետլիցք ձեռքով, տուփանումով	մ <sup>3</sup>	1.3000	0.9000	1.1700
99	Բնահողի փռում տեղում	մ <sup>3</sup>	5.2000	0.9000	4.6800
100	Միաձույլ է/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	5.1000	47.3360	241.4136
101	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.0200	399.1030	7.9821
102	Միաձույլ է/բ միջուկների պատրաստում B-20 դասի բետոնից /2,2+0,5/մ3	մ <sup>3</sup>	2.7000	86.0970	232.4619
103	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.1460	399.1030	58.2690
104	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.0400	406.1330	16.2453
105	Ցանցի արժեքը d=6մմ	տն	0.0170	533.9180	9.0766
106	Արտաքին պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 40սմ հաստությամբ /11,4մ2/	մ <sup>3</sup>	4.6000	19.8460	91.2916
107	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	մ <sup>2</sup>	2.0200	17.6450	35.6429
108	Արտաքին պատերի ց/ավազե սվաղ	մ <sup>2</sup>	22.8000	1.3350	30.4380
109	Արտաքին պատերի ճակատային ներկում, մաձկապատումով	մ <sup>2</sup>	22.8000	0.8360	19.0608
110	Բազալտե գլխաթասերի տեղադրում 450x50մմ /այդ թվում սյունագլխաթասեր/	մ <sup>2</sup>	4.8000	15.5210	74.5008
111	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /150x300/մմ	զմ	42.6000	6.0760	258.8376
112	Խճի շերտի պատրաստում բետոնե սալիկների տակ 10սմ հաստությամբ /անցուղիներ/	մ <sup>3</sup>	10.8000	13.2340	142.9272
